



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< ----->> << ----->> 2018թ.

N -----

**<<ARMDAY.AM>> ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ
ՎԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 2018 թվականի սեպտեմբերի 20-ի էլեկտրոնային հարցմանը՝ տեղեկացման կարգով հայտնվում է, որ << Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարը 2018 թվականի հուլիսի 2-ին համայնքի ավագանուն է ներկայացրել հրաժարականի դիմում, որի կապակցությամբ համայնքի ավագանին 2018 թվականի հուլիսի 3-ին գումարել է արտահերթ նիստ՝ օրակարգում քննարկելով համայնքի ղեկավարի հրաժարականը: Համայնքի ավագանու նիստը հրավիրված է եղել համայնքի ղեկավարի կողմից: Համայնքի ավագանին, ապահովելով նիստի իրավազորությունը (մասնակցությունը՝ 6 ավագանու անդամ), հաստատել է նիստի օրակարգը և արդյունքում որոշել է չբավարարել համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումը: Որից հետո համայնքի ավագանին 2018 թվականի հուլիսի 11-ի թիվ 31-Ա որոշմամբ հուլիսի 16-ից համայնքի ղեկավարին տրամադրել է ամենամյա արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ: Այդ ժամանակահատվածում, << Արմավիրի մարզպետի 2018 թվականի հուլիսի 25-ի N254 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից՝ 5 աշխատանքային օր տևողությամբ, << Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն:

<< Արմավիրի մարզպետի մոտ աշխատանքային խմբի կողմից կազմված արձանագրության քննարկման ժամանակ քննարկվել է նաև համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի հրաժարականը չբավարարելու, ինչպես նաև ավագանու կողմից համայնքի ղեկավարին արձակուրդ տրամադրելու որոշումները: Քննարկման արդյունքում << Արմավիրի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 8-ի N01/10/3501-18 գրությամբ Եղեգնուտ համայնքի ավագանուն ուղարկվել է գրություն, որով հայտնվել է, որ ավագանու 2018 թվականի հուլիսի 3-ի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշումն հակասում է <<Տեղական

ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին՝ համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից տրված հրաժարականի դեպքում համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն, այլ ոչ թե կայացնում որոշում:

Այդ առումով համայնքի ավագանուն առաջարկվել է, համայնքի ղեկավարի արձակուրդից վերադառնալուն պես՝ 2018 թվականի օգոստոսի 13-ին՝ «Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան, կազմել և ՀՀ Արմավիրի մարզպետարան ներկայացնել համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին համայնքի ավագանու համապատասխան արձանագրություն՝ միաժամանակ «Նորմատիվ իրավական ակտերի մասին»» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված կարգով անվավեր ճանաչելով համայնքի ավագանու կողմից օրենքի խախտմամբ ընդունված 2018 թվականի հուլիսի 3-ի որոշումը:

Համայնքի ավագանու կողմից, 2018 թվականի օգոստոսի 13-ին կրկին անգամ հրավիրվելով ավագանու նիստ՝ չպահպանելով գործող օրենսդրության պահանջները և ևս մեկ անգամ փաստելով իրենց կարգազանց դրսևորումը, նորից կազմվել է համայնքի ավագանու արձանագրություն «Տեղական ինքնակառավարման մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի սխալ հղումներով:

Օրենսդիրն իմպերատիվ կարգով նմանատիպ դեպքերի համար նախատեսել է ընդամենը համապատասխան արձանագրության կազմում, որն ինքնին չի կարող նույնացվել նորմատիվ իրավական ակտի հետ, հետևաբար կարելի է հանգել անվերապահ եզրահանգման առ այն, որ Օրենսդիրն այդ արձանագրության կազմման անհրաժեշտությունը չի պայմանավորում որևէ իրավական հետևանք առաջացնելու հետ, քանի որ համապատասխան իրավական հետևանքն առաջանում է հենց համայնքի ղեկավարի հրաժարականով: Նշվածն իր հերթին խոսում է այն մասին, որ ավագանին չունի օրենքով կանխորոշված լիազորություն համայնքի ղեկավարի հրաժարականը ընդունելու կամ ոչ, այլ սահմանափակված է բացառապես դրա մասին արձանագրություն կազմելով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, ՀՀ Արմավիրի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 24-ի N287 որոշմամբ ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքում նշանակվել է համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 2018 թվականի հուլիսի 25-ի N254 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, սահմանված ժամկետներում և կարգով, ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններով ներկայացվել են իրավասու մարմիններին:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետի կողմից 2018 թվականի օգոստոսի 21-ի N51/13-4288-18 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետին ներկայացված և 2018

թվականի սեպտեմբերի 5-ին ՀՀ Արմավիրի մարզպետարանում մուտքագրված գրությամբ մեզ հայտնվել էր, որ Եղեգնուտ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա. Հակոբյանի որոշմամբ գործով նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել էր հանցակազմի բացակայության հիմքով, այնուամենայնիվ մեր կողմից նյութերը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշման դեմ բողոք, ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազին, որից հետո նոր միայն հարուցվել է քրեական գործ:

Հայտնվում է նաև, որ իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներն ամբողջությամբ հրապարակված են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի էլեկրոնային կայքէջի (<http://armavir.mtad.am/>) «ՀԱՄԱՅՆՔՆԵՐ» բաժնի «ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ» ենթաբաժնում:

ՄԱՐԶՊԵՏ՝

 Недействительная подпись



VERIFIED OCSP 26.09.2018 12:22:16 GMT+4

Подписано: MIRJANYAN GAGIK 2608810403

**Գ.
ՄԻՐԻՋԱՆՅԱՆ**

Կապ.՝ Կ. Գրիգորյան
Լ. Հարությունյան

Հեռ. 023721003